



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 30 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2023

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹԵ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚ս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 50

ՃՄԱՐԻՏ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

Աստուած, Տեր Աստուածը ինք՝ խօսեցաւ,
 եւ կոչ ուղղեց աշխարհին, արեւելքէն մինչեւ արեւմուտք:
 Աստուած պիտի փայլարակէ Սիոնէն, որ կապարեալ է իր գեղեցկութեամբ:
 Մեր Աստուածը պիտի գայ՝ ոչ թէ լուռ կերպով, այլ՝ իր առջեւէն՝ լափող կրակով,
 եւ զինք շրջապատող սաստիկ փոթորիկով:
 Երկինք ու երկիր վկայ պիտի կանչէ, որպէսզի դարձնեն իր ժողովուրդը:
 «Իմ քովս հաւաքեցէք ինձի հաւաքարիմ մարդիկը,
 որոնք գոհի մաքուցումով ինձի հետ ուխտ կնքած են»:
 Եւ երկինքը պիտի հռչակէ անոր արդարութիւնը, որովհետեւ Աստուած ինքն է դատարարը:
 «Լսէ, ով իմ ժողովուրդս, ես պիտի խօսիմ,
 եւ քեզի դէմ պիտի վկայեմ, ով ժողովուրդ Աստուծոյ, ես՝ Աստուածս, քու Աստուածդ:
 Քու գոհերուդ համար չէ որ քեզ կը յանդիմանեն,
 ոչ ալ մշտականօրէն ինձի մաքուցած ողջակէզներուդ համար:
 Ես պէտք չունիմ ազարակիդ ցուլերուն, ոչ ալ գոմերուդ նոխագներուն,
 որովհետեւ իմս են անպաշին բոլոր կենդանիները,
 եւ հազարաւոր լեռներու վրայ արածող նախիրները.
 բարձունքներու թռչունները եւ բոլոր վայրի կենդանիները ծանօթ են ինձի եւ ինձի կը պարկանին:
 Եթէ անօթենայի՜ քեզի պիտի չըսէի, որովհետեւ իմս են աշխարհը եւ ինչ որ կայ անոր մէջ:
 Ես ցուլերու մի՛ս կ'ուրեմ, կամ նոխագներու արի՛ւն կը խմեմ:
 Եթէ ինձի գոհ պիտի մաքուցանես՝ երախտագիտութիւնդ ընծայէ,
 եւ կապարէ Բարձրեալ Աստուծոյս րուած քու խոստումներդ.
 օգնութեան կանչէ զիս՝ երբոր նեղութեան մէջ ես,
 եւ քեզ պիտի ազատես, եւ դուն պիտի փառաւորես զիս»:
 Բայց ամբարիշտիմ՝ Աստուած կ'ըսէ. «Դուն ի՞նչ իրաւունքով կանոններս կ'արարասանես
 եւ իմ ուխտս բերանդ կ'առնես, քանի որ դուն իմ խրատներս կ'արես, եւ կ'անտեսես խօսքերս:
 Գող մը որ րեսնես՝ անոր ընկեր կը դառնաս, շնացողներուն բաժնեկից կ'ըլլաս.
 բերանդ սանձարձակ չարախօսութեան կու րաս, լեզուդ նենգութեան կը ծառայեցնես:
 Ուրիշներուն հետ նստած՝ եղբօրդ դէմ կը խօսիս, քու հարազատ եղբայրդ կը վարկաբեկես:
 Այս բաները դուն ըրիր, եւ քանի որ ես լուռ մնացի՝ խորհեցար որ ես ալ քեզի պէս մէկն եմ:
 Բայց ահա հիմա կ'ամբաստանեմ քեզ, աչքիդ առջեւ պարզելով քու ըրածներդ:
 Նկարի առէք ինչ որ կ'ըսես, դուք՝ որ զԱստուած կ'անտեսէք,
 որպէսզի չըլլայ թէ ձեզ բզկտես, եւ ազատող չունենաք:
 Ան որ իբրեւ գոհ իր երախտագիտութիւնը կ'ընծայէ ինձի՝ ան է որ զիս կը փառաւորէ.
 ան որ իր վարք ու բարքին կը հսկէ՝ Աստուծոյ փրկութիւնը ցոյց պիտի րամ անոր»:

ՇՐՄԱՐԻՏ ԱՊՈԹԵ

Տեր ողորմեա, Տեր ողորմեա, Տեր ողորմեա, Տեր ողորմեա:
 Ամենատարբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
 Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցեղոց արքայութիւն:
 Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղեղոց:
 Տեր ողորմեա, Տեր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՃՄԱՐԻՏ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

Սաղմոս մը, որ իր հեղափոխական վերնագրով, կու գայ ներկայացնելու եւ սորվեցնելու թէ Աստուծոյ ուզած ճշմարիտ պաշտամունքը ինչպէս կ'ըլլայ: Աստուած ի՞նչ է որ կը սպասէ մարդէն:

1 հմր, կը ներկայացնէ որ խօսողը նոյնինքն՝ Աստուած է, որ Իր կոչը կ'ուղղէ համայն աշխարհին, արեւելքէն մինչեւ արեւմուտք: Աստուածներու Աստուածը, Տէրը ինք:

2-3 հմրները կը ներկայացնեն թէ Աստուած ինչպէս պիտի գայ, ոչ լուռ կերպով, այլ՝ լափող կրակով: Այսպէս արքայապետինը դարասարանի արքայապետինն է: Առաջին առիթով Աստուած լուռ կերպով ինքզինք յայտնեց աշխարհին: Երբ մտորին մէջ ծնաւ, ով իմացաւ անոր ծնունդը, միայն մոզերն ու հովիւները: Իր առաջին գալուստով եկաւ իբրեւ փրկիչ, իսկ իր երկրորդ գալուստով կու գայ իբրեւ դատարար: 4 հմր, երկինքն ու երկիրը իբրեւ վկայ կը կանչէ, որպէսզի դատէ իր ժողովուրդը: Այնպէս ինչպէս որեւէ դատ որ փեղի կ'ունենայ վկաներ կը կանչեն որպէսզի դատը ըստ այնմ արդարութեամբ փեղի ունենայ:

5 հմր իր քովը կը կանչէ իրեն հաւատարիմ մարդիկը, այն մարդիկը որոնք գոհի մարտցումով Աստուծոյ հետ ուխտ կնքած են: Որ գոհի մասին է խօսքը: Այն գոհը որ Աստուած ինք փութաւ: Յիսուս Քրիստոս գոհը, որուն արիւնով ուխտ կ'ընդունեցաւ Աստուծոյ եւ մարդուն միջեւ: Վերջին ընթացքին, Քրիստոս բաժակը առնելով պիտի ըսէր, «առէք խմեցէք, այս է արիւն իմ նորոյ ուխտի, որ վասն ձեր եւ բազմաց հեղանի, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց»: 6 հմր երկինքը պիտի հռչակէ Աստուծոյ արդարութիւնը, որովհետեւ Աստուած Ինք է արդար դատարարը: 7 հմր այս անգամ խօսքը կ'ուղղէ Իր իսկ ժողովուրդին Իսրայէլին: Նաեւ այս պարագային, Նոր Իսրայէլին: Ահա այդ ժողովուրդին դէմ վճարութիւն ունի փալիք:

8-15 հմրները կը ներկայացնեն բովանդակութիւնը յաղ վկայութեան եւ յանդիմանութեան: Աստուծոյ յանդիմանութիւնը Իր ժողովուրդին նկատմամբ, ոչ գոհերուն համար է, ոչ ալ ողջակէզներուն համար: Որովհետեւ Աստուած յարակօրէն կը ներկայացնէ, որ Ինք կարիքը չունի ոչ ցուրերուն, ոչ նոխազներուն, ոչ ալ որեւէ փեսակի կենդանիներու, որովհետեւ բոլորն ալ Աստուծոյ կը պատկանին: անցեալին եթէ Աստուած գոհեր մարտցելու ձեւեր պատուիրեց, որպէսզի անով սորվեցնէր մարդուն, եւ այս պարագային՝ իր ժողովուրդին, ինքզինք Աստուծոյ ընծայելու: Այնպէս ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ, «Ձեր անձերը ընծայէք Աստուծոյ գոհասեղանին»: Այսօր ալ մեր պարագային, այսօր եկեղեցի երթալով ինչ կ'ընենք, մոմ կը վառենք, նուիրարարութիւն կ'ընենք, որո՞ւ է որ կ'ընենք: Աստուած չ այդ մոմին կարիքը ունի, ոչ ալ այդ դրամին: Այդ բոլորը եթէ կ'ընենք, այդ բոլորի ետին եղող իմաստը այն է մեր երախտագիտութիւնը յայտնելու Աստուծոյ եւ առաւել եւս, Անոր խօսքին մէջ մնալու եւ Անոր հաւատարիմ: Իսկ երբ նեղութեան մէջ ենք, Իր անունը կանչելու, Իրմէ խնդրելու մեր օգնութիւնը:

16-20 հմրներ, Աստուած իր խօսքը կ'ուղղէ ամբարիշտին, յիշեցնելով, թէ «ի՞նչ իրաւունքով Աստուծոյ կանոնները կ'արտասանէ, միւս կողմէ Աստուծոյ խրատը կ'արտ, եւ խօսքերը կ'անտեսէ»: Տակաւին, գողին հետ բարեկամ կ'ըլլայ, շնացողին հետ բաժնեկից: Բերանը չարախօսութեան իսկ լեզուն նենգութեան համար կ'օգտագործէ: Ուրիշներուն հետ նստած, եղբօր դէմ կը խօսի ու կը վարկաբեկէ: Փոխանակ եղբօրը հետ ըլլալու եւ անոր օգնելու:

21 հմր, այդ բոլորը Աստուած փեսաւ, ու կը փեսնէ, եւ հեղափոխականօրէն կը ներկայացնէ, որ եթէ Աստուած չի խօսիր, եւ կամ չի միջամտեր, չի նշանակեր, որ Աստուած ալ այդպիսին է, կամ չի փեսներ: Ընդհակառակը, Աստուած առիթ է որ ուզեց փալ կամ կ'ուզէ փալ, որպէսզի մարդը ինք անդրադառնայ, դարձի գայ, ապաշխարէ, որպէսզի Աստուած ողորմի ու փրկէ, այլապէս՝ վերը ըսաւ, որ իբրեւ ինչպիսին պիտի գայ, ոչ լուռ, այլ՝ լափող կրակի պէս: Եւ ահա աչքիդ առջեւ պիտի պարզեմ ըրածներդ, կ'ըսէ Տէրը: 22 հմր, ահա այդ իրաւեր կոչը դարձի եւ ապաշխարութեան. «Նկարի առէք, ինչ որ կ'ընեն, դուք որ զԱստուած կ'անտեսէք, որպէսզի ըլլայ թէ ձեզ բզկտեմ, եւ ազատող չունենաք»: 23 հմր, ուրեմն ան որ իբրեւ գոհ իր երախտագիտութիւնը կ'ընծայէ Աստուծոյ, ան է որ զԱստուած կը փառաւորէ, ան որ իր վարք ու բարքին կը հսկէ՝ Աստուծոյ փրկութեան կ'արժանանայ:

Պ*ահապան ամենայնի Քրիստոս,
աչ էն հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ցանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ էն արարածոց եւ ինձ բազմամեղիս:*